600.0003.17.01.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունվարի 2018 թվականի №3Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի №688Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2007 թվականի դեկտեմբերի 28-ի №688Ա որոշմամբ «ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №0297 թույլտվության գործողության ժամկետը սահմանված է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 28-ը, սակայն ընկերությունը նշված թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու հայտով չի դիմել Հանձնաժողով,

բ) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 29-ի №360Ա որոշմամբ ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 409 125 (չորս հարյուր ինը հազար հարյուր քսանհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

գ) Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 20-ի №415Ա որոշմամբ ընկերությունը պարտավորեցվել է 2016 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 238 425 (երկու հարյուր երեսունութ հազար չորս հարյուր քսանհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №688Ա որոշումը:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում 900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով 2017 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 28-ը հաշվարկված 128 070 (հարյուր քսանութ հազար յոթանասուն) դրամ պարտքը:
3. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի դեկտեմբերի 28-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
17 հունվարի 2018թ.